

ՄԱՅԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարադպրոցային գրիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маяк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր ըստին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Աւելանդա-
պօղից: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անդ-
լիս: Թիֆլիս: Նամակ Թիֆլիսից: Արտաքին
լուրեր: ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Խա-
մայի Մէլիքովիւնները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԱՆԷՔՍԱՆԳՐԱՊՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 10-ին

Երէկ հոգեւոր ուսումնարանի զանգեմ թեմա-
կան վերադասու է պ. Պերճ Պաշկանցի նախագա-
հութեամբ կայացած նորընտիր պատգամաւորաց
ժողովը, զաղտնի քուէարկութեամբ ընտրեց հո-
գաբարձուք և հոգաբարձական կանդիդատներ մեր
վիճակալից հոգեւոր դպրոցի և Արշակունի օրիոր-
դական դպրոցի համար հետեւեալ անձինքներին:

Հոգեւոր դպրոցի համար: Աղաթէկ Զան-
գաթեան 14 ձայնով, Գրիգոր Խորոշիկեան 13,
Առատուր Խաչատրեան 13, Տիգրան Տիգրանեան 13,
Աւելանդապօղի 13, Յակոբ Զահարեան 13,
Ամատուր 8 ձայնով: Կան զի դատեն եր ընտր-
վեցան. Հաճիկապօղ Կարապետեան 10 ձայնով,
Յակոբ Մատինեան 10, Պետրոս Յիւրիշեան 10,
և Արամ Մատինեան 8 ձայնով:

Արշակունի օրիորդաց դպրոցի հա-
մար հոգաբարձուք ընտրվեցան. Սարգիս Միրզա-
յեան 14 ձայնով, Գեորգ Ղաւարեան 11, Յա-

կոբ Զահարեան Ամատուր 10 և Պետրոս Քեչի-
չեան 8 ձայնով: Նրանց կան զի դատեն եր ըն-
տրվեցան. Գեորգ Սանդիկեան և Արշակ Տէր-Ղա-
զարեան, երկուսն էլ 6 ձայնով:

Այս նորընտիր անձանց ցուցակը խնդրում ենք
տպագրէք «Մշակի» մէջ ի գիտութիւն մեր հա-
սարակութեան:

Տեղացի

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 12 մայիսի

«Մշակի» 72-րդ համարում հրատարակված լու-
րը, որը վերաբերում էր Թիֆլիսի Նորաշէնի Ս.
Մարիամեան օրիորդաց ուսումնարանի տեսուչ պ.
Անդրէաս Զաչիտեանցին, չարթնացրեց պ. պ.
հոգաբարձուներին, չը նայելով որ պ. Ա. Զաչի-
տեանցը իր լուսավորչական բոլորովին համաձայնակ-
ցաւ յիշեալ լուրի մէջ յայտնած մտքերին, այնու
ամենայնիւ, կրկնում ենք, պ. պ. հոգաբարձունե-
րը չուղեցան լսել ճշմարտութեան ձայնը և
դարձեալ պաշտպանում են Զաչիտեանցին: Սորան
պաշտօնից չը դրկելը միանգամայն փաստ է ու-
սումնարանին, որովհետեւ քանի որ այսօրիս ան-
ընդունակ տեսուչը մնում է իր պաշտօնի մէջ,
խուսովութիւնները հետզհետէ սաստկանում են և
ուսումնարանը զոհ է դնում ամբարշտ տեսչին և
նորան անխորհուրդ պաշտպանող հոգաբարձունե-
րի կամայականութեամբ: Նորեւրեմ էլ նոյն դպր-
րոցի ջերմուսնող ծառայող ուսուցիչներից մէկը,
այլ ևս անհնարին և մարդկային կարողութիւնից
վերահանելով Զաչիտեանցի հետ ծառայել, յայտ-

նել է իր հրաժարականը՝ դրաւոր բողոք ներ-
կայացնելով պ. Զաչիտեանցի արարքների մասին:
Այսպիսով ահա դեռ ևս ամիսը չը լրացած,
զայրոքը, այդ տեսչի նորհիւ, կորցրեց երկու ու-
սուցիչ: Վարժուհիներից մէկն էլ, որը երկու տա-
րի ճիւղ ծառայում է այդ դպրոցում, զրոյցելով նոյն
Զաչիտեանցի անտեղի կոտորածից, ինչպէս ասում
են, չուտով հեռանալու է, իսկ մնացածների մէջ
տեսչի դեմ ունեցած ատելութիւնը օրից օր սաստ-
կանում է:

Չարմանալի և միանգամայն անբացատրելի է,
թէ պ. պ. հոգաբարձուք ինչի համար են պաշտ-
պանում այն մարդուն, որը ինչպէս իրանք էլ
համոզված են, իբրեւ մարդ և իբրեւ տեսուչ, բոլոր-
ովին անփութեամբ է ուսումնարան կատարակ-
ւում, որը իր տեսչական պաշտօնը ճանաչել է
թողել և կաւիճ դնելով, անտեղի դուռնալով և
վարժուհիներին ու աշակերտուհիներին աղիտորով
կայացնելով:

Յանկալի էր հրապարակօրէն խմանալ այսօրիս
մտղարործան պաշտպանութեան պատճառը և նը-
պատակը ինքի սէ հոգաբարձուներից, զոնէ այն
նոր հրաժարված պարունից, որին անկապած յայտ-
նի կը լինի բողոքը մանրամասնօրէն:

Թ. Գ.

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 12 մայիսի

Թիւյլ տուէք ձեր պատուական լրագրի էջե-
րում յայտնել իմ անկեղծ և խորին չորհրդակալու-
թիւնս օրիորդ վ. ի. և ի. Գարապէաներին,

եղաւ, որ հաստատեց հայոց իշխանների (մէլիքս*)
տիրադատը, որ կրում էին աւելի հին ժամանակնե-
րից: Գրանով Դահ-Արաքը կամեցաւ վարձատրել
այն մեծ ծառայութիւնը **) որ հայոց մէլիքները
կատարեցին նրա օսմանցիների դեմ ունեցած յաշ-
թութիւնների մէջ:

Մէլիքների իշխանութիւնը տեղեւ շատ երկար,
իսկ Անդրկովկասում, մինչև ուսումների տիրապե-
տութեան օրերը: Եւ այնու խօսքով այդ իշխանու-
թիւններից միայն մի խմբի վրա, որը ընդհանուր
անունով կոչվում էր Խաւսալի մէլիքու-
թիւնն էր (**):

Խաւսալի մէլիքութիւնները բաղկանում էին հինգ
փոքրիկ գաւառներից, որոնք միմեանց սահմանա-
կից լինելով, կազմում էին մի ամբողջ նահանգ,
որը այժմ կոչվում է Ղարաբաղ, իսկ մեր պատ-
մութեան մէջ յայտնի է Արցախ, կամ Փոքր-Սիւ-
նիք անունով: Գաւառի հին ժամանակներում
Աղուանիք աշխարհի մի մասն էր ներկայացնում:

Յիշեալ հինգ գաւառները հետեւեալներն են.

- 1) Գիւլիստան կամ Թալիշ, որ սկսվում է
Քիւրաղ-չայ գետից, այսինքն Գանձակի սահման-
ներից, և տարածվում է մինչև Թալիշ գետը:
- 2) Զրաբեդ կամ Զարաբեդ, որ սկսվում է
Թալիշ գետից և տարածվում է մինչև Խաչնի
գետը:
- 3) Խաչնի, որ սկսվում է նոյն անունով գե-
տից և տարածվում է մինչև Բալու-Չայ գետը:
- 4) Վարանդա, որ սկսվում է այդ գետից
և տարածվում է մինչև Գիւլիստան լեռնային
գոտին:
- 5) Տիգրակ կամ Գուգալ, որ սկսվում է այդ
լեռներից և տարածվում է մինչև Երասխ գետը:

Այդ երկրները, որ ինչպէս վերեւում յիշեցի, մի
ժամանակ Աղուանիք թագաւորութեան մի մասն

*) Մէլիք կամ մալիք նշ. իշխող, տիրապե-
տող, այլև արքայ:

**) Սինկապ աշխարհի հայոց մէլիքները և էջ-
միսնի կաթողիկոսը մի քանի եպիսկոպոսների
հետ, օսմանցիների լծից ազատվելու համար, ի-
րանք զիմեցին Սպահան և հրապարակեցին Դահ-Արա-
քին Հայաստան տիրելու համար:

***) Խաւսալ արաբերէն նշ. հինգ, իսկ Խաւսալի
մէլիքութիւններն են. հինգ մէլիքութիւններ:

Մարի-Նուարդին, պարոն Միսկիսեան և բոլոր
դերասաններին, ընթիսօրին և յուշարարին, որոնք
սիրով ընդունեցին և մասնակցեցին իմ նպատակին:
Նոյնպէս իմ չորհրդակալութիւնս յայտնում եմ
Թիֆլիսի հասարակութեանը և իմ ուսանող ըն-
կերներին, որոնք իրանց մեծ աշխատութիւնով,
օգնութիւնով և ներկայ գտնվելով պատուեցին իմ
երեւոյթը:

Աշակերտ Ռէալեան ուսումնարանի Գեորգ Տէր-
Պետրոսեանց (Օրդուբաթեան)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարից սկսում ենք տպել
Բաթիֆի նոր աշխատութիւնը՝ «Խաւսալի Մէ-
լիքութիւնները» վերնագրով, որը մի պատ-
մական նկարագիր է Ղարաբաղի մէլիքների գոր-
ծունէութիւնից: Իսկ դրանից յետոյ կը տպվի
«Карабахский асрор» վկայ թարգմանու-
թիւնը, որի նիւթը նոյնպէս առնված է Ղարաբա-
ղի մէլիքների կեանքից:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը՝ «Հայոց
Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողո-
ւրդ, ընկերութեան հաշիւը տեսնելու համար, ըստ
կանոնադրութեան լինելու էր մայիսի 15-ին, բայց
ինչ ինչ հանգամանքների պատճառով յետաձգ-
վում է մինչև սոյն մայիս ամսի 23-ը»:

Գործաւ եկաւ «Գործ» ամսագրի № 1 և ուղարկ-
վեցաւ բաժանորդներին: Թիֆլիսում կարելի է գրվել
պ. Դահ-Արաքի պատկերով: Առանձին հա-
մարներով ամսագիրը ծախվում է 1 ռուբլով:

վում էր Հաւան-Չալալ իշխանը թաթարների ար-
շաւանքների դեմ: Մի այլ բերդ, զարձեալ Խաչնի
գաւառում, գտնվում է յիշեալից մի քանի ժամ
ճանապարհով հեռու, սուրբ Յակոբայ վանքի հան-
դէպ: Այդ բերդը արժանի է իր անունը. նա
կոչվում է Կալապալարեդ (Սարգապալարեդ)
որովհետեւ օրաթիւի կալապալները միայն կարող
են բարձրանալ մինչև նրա սրածայր գագաթը, որ
կոչվում է ամպերի մէջ: Վարանդայի մէլիքի ամ-
բողջ գտնվում էր Չաւսալի (Սինկապալարեդ) ա-
ւանում, կուսանաց անապատի հանդէպ: Տիգրակի
մէլիքի ամբողջ գտնվում էր Տոլ աւանում Գոչի
վանքի հանդէպ, որը բարձրացել է մինչև երկինքը:
Այդ երկրում աշխարհից հրաժարված արեղա-
ների վանքերի հանդէպ կանգնած էին իշխանա-
կան ամրոցները, նրանց սարսափելի բերդերը, իսկ
խաչի հետ միացրած էր սուրը:

Մէլիքների իշխանութիւնը ժամանակակից էր.
հօր մահից յետոյ տիրում էր անդրանիկ որդին և
կոչվում էր մէլիք, իսկ միւս եղբայրները կոչ-
վում էին բէկ: Օրէնքի փոխարէն կատարվում
էր տիրոջ կամը և ժողովրդական սովորութիւն-
ները, որոնք դեռ պահպանված էին իրանց նահա-
պետական ձևերի մէջ: Մէլիքները անաւանան ի-
րաւունք ունէին իրանց հայապետների վրա, նրանց
դատելու, պատժելու և մինչև անգամ մահուան
դատաւարութեամբ:

Մէլիքները թէ քաղաքական չանքով և թէ
խնամութեան կապերով միացած էին միմեանց
հետ, և այսպիսով Խաւսալի բոլոր հինգ իշխա-
նութիւնները կազմում էին մի ամբողջ զանալ-
ցական միութիւն: Պատասպանված իրանց անմատ-
չելի լեռների և միջին անաւանների մէջ, նրանք
ոչ մի մահապալակ թույլ չէին տալիս ընկալու-
թիւն հաստատելու իրանց երկրներում և ամբողջ
Ղարաբաղի ազգաբնակչութիւնը բազմաթիւ էր:
Այն հայերից, որոնք քանակութիւնը բազմաթիւ էր:

Այժմ դուռնալ Խաւսալի հինգ գաւառների տի-
րապետող մէլիքների ծաղկումը:

II

1. Գիւլիստանի Մէլիք-Բեկաբեկեանի ծա-
ղկումը *):

*) Մեր ձեռքում գտնված մի գրչապի պատ-

ԿԱՐԱԿՈՒՐՏԻՅ մեզ գրում են: «Մայիսի 5-ին եղած արեգակի խաւարումը տեղիս մահմետական բնակիչներին մեծ երկիւղ պատճառեց: Նրանք հաւատացած էին որ աշխարհիս վերջն եկել է: Մօլլան բարձրացաւ մզկիթի վրա և բարձրաձայն աղօթում էր, մինչև խաւարումն անցաւ: Ժողովուրդը մզկիթումն էր հաւաքւած և ջերմեանդ կերպով աղօթում էր:»

Միջայեկան ծովածոցի փոքրամիւ հայոց հասարակութիւնը իր մէջ հաւաքեց 53 բուրլ և ուղարկեց մեր խմբագրութեանը որ հասցենք այդ գումարը Ներսէս պատրիարքին:

ՄՕԶԴՈՎԻՅ ստացանք 10 բուրլ յօգուտ Միացեալ Ընկերութեան, որ ուղարկել է մեզ պ. Բաղդասար Մէլքեան և որ հաւաքվեց մի քեֆի ժամանակ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Ապրիլի 29-ին, համայնքների ժողովի նիստում, սեր Վիլիամ Գարիուր կառավարութեան կողմից ներկայացրեց ստիպողական նոր օրէնքի գլխաւոր կէտերը, որ Գլխաւորութեան կամեաւ մի մասնէ իրանդիայում, այդ երկրում կարգը վերականգնելու համար: Գարիուրի խօսքերով, կառավարութեանը միջոց հիմնել մասնաւոր յանձնաժողով, որ բաղկացած կը լինի բարձրագոյն դատարանի երեք անդամներով, որոնք կը շրջեն երկրի մէջ և կը դատեն յանցանքները, առանց երդուեալ դատաւորների մասնակցութեան: Գատաւճիւնները միաձայն պէտք է լինեն: Իրաւունք է տրւում բողոքելու բարձրագոյն դատարանին, որ կարող է հաստատել մասնաւոր դատարանի վճիռը, կամ թէ փոխել, թեթեւացնելով պատժը. պատժը մեծացնելու իրաւունք չունի նա: Ու

Մէլքե-Բէգլարեանները բնիկ ուտէացիներ են, Նիփ գիւղից: Թէ ինչ հանգամանքներ ստիպեցին նրանց թողնել իրանց հայրենիքը, և գաղթելով Ղարաբաղի կողմերը, Գիւլիստան գաւառում նոր բնակութիւն հաստատել,—այդ մասին լուում է պատմութիւնը: Միայն այսօրոք յայտնի է, որ առաջին գաղթականը, որին թուրքերը կոչում էին «Ղարա-իւլաշի» (սև հարկւարպետ) իսկ հայերի մէջ յայտնի էր անուանվել սև Աբով, հասարակ մարդ էր *): Նա իր հայրենիքում ժողովրդի կառավարիչ էր, հարուստ էր:

Տառն և միջերկրի դարու սկզբներում, յանկարծ այդ «սև հարկւարպետը» յայտնվում է Ղարաբաղի կողմերում, բոլորովին աղքատ, իր հետ ունենալով միայն եօթն ընտանիքներ և մի քանի անասուններ, որ կրում էին նրանց ճանապարհի ծանրութիւնները: Նրանք է, որ իրանց հայրենիքում մի աղէտալի դէպք պէտք է պատահած լինէր նրանց հետ, որով թէ կողոպուտված են եղել և թէ տաքաղարկված:

Գալով մի անձանոթ աշխարհ, նրանք ոչ բնակութեան տեղ ունէին և ոչ պատասպարան: Թէև աշնան ցրտերը արդէն սկսվել էին, նրանք դեռ բնակվում էին իրանց չատրներում, թարթար դեռի ձայն արկերի մօտ, այժման թաւիչ գիւղից փոքր ինչ հեռու:

Գուցէ «սև հարկւարպետը» կը ցանկանար իր նոր եկած աշխարհում առ ժամանակ անյայտութեան մէջ ծածկված մնալ, բայց մի դէպք երևան հանեց նրան: Մի օր նրա գրաստները դաշտում արածելու ժամանակ, վրա հասան մի խումբ աւաղակներ և աւարի առին անասունները: Այդ միջոցին դուրս եկաւ «սև հարկւարպետը» և նրա հետ մի քանի երիտասարդներ, նետովեան աւա-

մութիւն Մէլքե-Բէգլարեանների ծաղումը դուրս է բերում Աղուստից ամենաշին թաղաւորների մէկից՝ Աւանից, որ ապրում էր Քրիստոսից շատ առաջ: Այդ նիւթաղորութիւնը խիստ ստուգութեան կարօտ է:

*) Ղարաբաղի բոլոր մէլքեների նախնիքը կրում էին «իւր դրաշի» տիտղոսը. այդ տիտղոսը տրվում էր այն անձանց, որոնք սեպական երկիրներին տէր էին և իրաւունք ունէին զօրքեր պահելու:

ըովհետև կատարված յանցանքների մեծ մասը զիշերային խորհրդակցութեանց հետեան է, այդ պատճառով պոլիցիային իրաւունք է տրւում թէ զիշերով և թէ ցեղերով անային խուզարկութիւններ անել: Այն բոլոր անձինքը, որոնք զիշերով փողոցում կը հանդիպեն և չեն կարող բացատրել այդպէս ուշ գրծանելու պատճառը, կը կալանաւորվեն: Որովհետև ամենասարսափելի յանցանքները օտարազգիների դրած է, այդ պատճառով կառավարութիւնը միշտ պահելով ունի վերականգնել օտարազգիների դէմ եղած օրէնքը և պոլիցիային լիազօրութիւն տալ կայանաւորել կասկածաւոր անձանց: Ինչ որ գաղտնի ընկերութիւններն է վերաբերվում, նրանց հետ մասնակցութիւնը, նոր օրէնքի հիման վրա յանցանք է համարվում: Անհնազանդութեան դէպքերի առաջն առնելու համար, յօդուէյանանտը իրաւունք ստացաւ արձակել օրէնքի հակառակ ժողովները և յարքունիս գրաւել այն լրագիրները, որոնք դէպի անհնազանդութիւնը կամ դէպի յանցաւոր գործողութիւնները կը գրգռեն ժողովուրդը: Նրան նոյնպէս իրաւունք է տրւում գործողացնել պոլիցիայի կազմակերպութիւնը այն շրջաններում, որոնց մէջ անհրաժեշտ կը համարվի այդ միջոցը: Այն շրջաններում, որոնց մէջ բռնութիւններ և սպանութիւններ կը կատարվեն, տուգանքներ կը նշանակվեն: Օրէնքը երեք տարվայ ընթացքում ուժի կունենայ: Ամբողջ նախադիւրք ընդունված է 327 ձայների մեծամասնութեամբ 22-ի դէմ:

„France“ լրագրին Գուլիսից հեռագրում են, որ այդ օրէնքը հիացրեց Գուլիսի պահպանողականներին և խոշոր կալաւածատներին, իսկ բոլոր անկեղծ մարդիկը, ճշմարտութեան և արդարութեան բարեկամները, Գաղստօնի վճիռը կորստաբեր

զակների ետեւից: Մի քանի ժամից յետոյ վերադարձան նրանք, բերելով իրանց հետ ոչ միայն կողոպուտված անասուններին, այլ և կողոպուտված աւաղակներին, որոնց բոլորին կալանաւորեցին:

Միւս օրը յայտնվեցան մի այլ խումբ ձիււորներ, որոնք դիմելով «սև հարկւարպետին», ասեցին նրան, թէ իրանք Բարդալի խանի մարդիկն են, թէ իրանց հրամայված էր այդ աւաղակներին բռնելու, որովհետև նրանք մեծ վնասներ են հասցրել երկրին, և այժմ շատ ուրախ են, որ աւաղակները կալանաւորվեցան առանց իրանց աշխատութեան: Այդ խօսքերով առնում են աւաղակներին և տանում են Բարդալի խանի մօտ, առանց յայտնելու նրան, թէ ով եղաւ աւաղակների բռնողը, որպէս զի խանի պարզները իրանք ստանան:

Խանը հրամայում է աւաղակներին զլխատել, իսկ իր մարդիկներին պարզներով վարձատրել, նրանց քաջութեան համար: Այդ միջոցին աւաղակապետը ասում է խանին. «Պատժեցէք մեզ, որպէս ձեր կամքն է, որովհետև մենք քո երկրները աւերակ դարձրինք: Բայց մի անպատեցէք մեզ, այդ ողորմելի մարդիկների չը կատարած քաջութիւնները վարձատրելով, իր թէ դրանք են եղել մեզ յաղթողները»:

Խանը ստուգելով իմանում է, որ իր մարդիկը խաբել են իրան և կանչել է տալիս «սև հարկւարպետին»: Նա մի այլ վարձատրութիւն չէ պահանջում իր մատուցած ծառայութեան համար, միայն որպէս գաղթական մարդ, խնդրում է որ իրան բնակութեան տեղ տայ: Խանը որոշում է նրա համար որպէս մշտական սեպականութիւն հին թաւիչ կամ թարիչ գիւղը՝ Գիւլիստանի գաւառում, Հոռեկայ վանքի մօտ: Այն այսօրոք նրա յայտնի է «սև հարկւարպետին» կհանդիպի: Նրա գերեզմանի քարի վրա, որ գտնվում է յիշակ վանքի մօտ, փորագրված է մի տող միայն, որից երևում է, թէ նա վախճանվեցաւ հայոց ա. ձ. ա. (1081) թուականին, իսկ փրկական 1632 թուականին:

Այն Աբովը ունէր մի քանի որդիներ, որոնցից, երեքը, մէլքե-Բէգլարը, յաջորդում է Տօրք:

Մէլքե-Բէգլար I իր նախնիքների քաջասիրտու-

նէ համարում: Պոլիցիան կարծում է, որ Կալէնդիլի և Բօրկի սպանողները թաղված են Գուլիստան, ուր շտապով վերադարձան յանցանք գործողաց յետոյ: Իրանց ճարակութեամբ յայտնի Վոնդօնի չորս խուզարկները Գուլիսն են ուղարկված:

Նորերում սպանված Բօրկի անձնաւորութեան մասին յայտնված կարծիքները նոյնքան լաւ են, որքան և յօդու Կալէնդիլի մասին: Բօրկ դուրս եկաւ իրանդական ժողովրդից և առանց արիստոկրատ բարեկամներ ունենալու, միայն իր անձնական աշխատանքներով և ծառայութիւններով ըստացաւ իր բարձր դիրքը, իրանդական գործերի գլխաւոր քարտուղարի պաշտօնը, որ նա վարում էր մի քանի տարի շարունակ: Կոմս Կոսպեր, որ նորերում միայն թողեց իրանդական փոխարքայի պաշտօնը, յայտնեց հետեւալը լօգերի ժողովի մէջ: «Թոյլ տուէք ինձ յայտնել իմ յարգանքը հանդուցեալ Բօրկին, որի հետ վերջին երկու տարիների ընթացքում ամեն օր յարաբերութիւններ ունէին: Մեր հայրենիքի համար Բօրկի մահը անփոխարինելի կորուստ է: Նա չափազանց ազնիւ բնաւորութեան և առողջ դատողութեան տէր մարդ էր: Բաղդաւորապէս Անգլիայի մէջ շատ կան այդպիսի պաշտօնեաներ: Բայց նա ունէր և ուրիշ բարձր արժանաւորութիւններ, որ ունենում են միայն մի քանի նշանաւոր պետական գործիչներ: Չափազանց ճիշդ հայեացք և առողջ դատողութիւն ունենալով, նա ամենագիտաւր լուսններում հարկաւոր վճիռն էր կայացնում: Մի և նոյն ժամանակ Բօրկ մեծ համակրութեամբ էր վերաբերվում իրանդական ժողովրդի բոլոր դասակարգերին և համըմբած էր, որ անհրաժեշտ է իրանդիայի մէջ վերականգնել հանգստութիւնը»: Գուլիս Մարլբորօ, որ Բիլիսոնֆիլդի մի-

թեան հետ ունէր և խնջը: Նա հիւրը դրեց Գիւլիստանի մէլքեներին իշխանութեանը, և արիստոկրատիկ նոր երկրներ, աւելի բնորոշակեց իր իշխանութիւնը: Նա խից տեղային նախկին տիրապետողից, որ կոչվում էր Աբրահամ իւզաշի *) (Իբրահիմ գաւառ), մի քանի գիւղեր, որպէս էին վերջիններ, Ներքին-չնը, Ելքէլը և այլն: Եւ տիրապետելով Գիւլիստան բերդին, նորոգեց այդ անմատչելի ամրոցը, և իր բնակութիւնը այնտեղ հաստատեց: Նա թողեց երկու որդի, երեքը կոչվում էր իր պապի անունով Աբով, իսկ կրտսերը Թամրազ (Թէյմուրազ):

Չոր մասից յետոյ յաջորդեց երեք որդին Աբով II., որի մի տղան հրացանի գնդակից վնասված լինելով, յայտնի էր անուանվել կաղ Աբով:

Կաղ Աբովը իր անպարտելի քաջաբերութիւններով շատ նման էր իր պապին և Աբովին: Յաջորդութիւններ, աւարտութիւնը և յանդուգն սպառնալուծութիւնները նրա ժամանակում երկրների իշխողների համար ոչ միայն անբարոյակաւորութիւն չէին համարվում, այլ ընդունվում էին որպէս քաջազանական արժանաւորութիւններ, որոնց անպատճառ պէտք է ունենար երկրի իշխողը, իր շրջակայ թշնամիներին երկիւղի մէջ պահելու համար: Այդ յատկութիւններից դուրս չէր կաղ Աբովը: Նա ամեն ինչ ձեռք էր բերում յաջողակութիւնով. նա յաջողակեց մինչև անդամ իր կնոջը՝ գեղեցիկ Գամարսոյթիին:

Մանգամ երբ իր խուճով դնում էր Գանձակի կողմերում աւարաւորութիւններ անելու, Գետաշէն գիւղից բարձր, Գուլիստան գիւղի մօտ, լեռների վրա հանդիպում է Գանձակի Մամատ-խանի օրաներին (КОВЕКА): Զարձակման միջոցին տեսնում է խանի աղջկան, որը իր «քառասուն» աղակին ներքին հետ եկել էր այնտեղ իր հօր հովիւների մօտ ամառը անցկացնելու: Օրիգինի գեղեցկութիւնը այն աստիճան յաջողակեց և Աբովին, որ նա մոռանում է Մամատ-խանի հօտերի հարուստ աւարը և առնանդում է միայն նրա դուտերը: Աբովը այդ ժամանակ ազգայ երիտասարդ էր,

*) Աբրահամ իւզաշու ժամանակները այժմ բնակվում են Գիւլիստան գիւղում, որպէս հասարակ չինականներ:

նիստութեան ժամանակ իրանդական փոխարքայ էր, ասեց հետեւեալը. «Նրեք տարիների ընթացքում, որ ես կառավարում էի իրանդիան, գրեթէ ամեն օր օգուտ եմ քաղել Բօրկի տաղանդից և ահագին փորձառութիւնից, որի խորհուրդները շատ են նըպաստել իմ սեփական պարտականութիւնների կատարմանը: Այդ պարունի մահը մեծ կորուստ է իրանդիայի համար: Կս ինձ համար մեծ պատիւ եմ համարում, որ կառողացայ ստանալ նրա բարեկամութիւնը: Բօրկի ծառայութեան ձևի նշանաւոր կողմնայն էր, որ նա, թէպէտ բոլորովին չէր բաժանում լըրդ Բիլիսոնֆիլդի միտնաւորութեան քաղաքական ընդհանուր հայեացքները, բայց այնու ամենայնիւ երեք տարի շարունակ իր պաշտօնական գլխաւորների ամենաբարեխիղճ և հաւատարմ խորհրդատու էր:»

Համայնքների ժողովում Ֆօրստեր հետեւեալ կարծիքը յայտնեց Բօրկի մասին: «Գուցէ այստեղ շատերը այնպէս չէին ճանաչում Բօրկին, ինչպէս ես, ասեց նա: Կարող եմ վկայել կատարեալ համոզմամբ, որ Թամրազին և հայրենիքը Բօրկից աւելի հաւատարմ, աւելի աշխատող, ազնիւ և անձնազոյժ ծառայ չեն ունեցել: Նրա տաղանդը և պարտաճանաչութիւնը սովորականից աւելի էր: Մի փաստ կը յիշեմ, որից գուցէ համայնքների ժողովը հասկացողութիւն կը կազմէ, թէ ինչպէս էր վերաբերվում Բօրկի իր պարտականութիւնների կատարմանը: Մի քանի ամիս առաջ ներքին գործերի մի-նիստութեան պաշտօնեաները արժանացան պատուաւոր ընձաների: Համոզված լինելով, որ Բօրկ կատարելապէս արժանի էր այդպիսի բարձր վարձատրութեան, ես թէ բերանացի և թէ գրաւոր հաղորդեցի նրան, որ մտադիր եմ նրան ներկայացնելի մի-

բայց գեղեցիկ երիտասարդ, թէև ոչ այնքան յաղթանաւոր, և դէմքով բաւական թուլ, որպէս էին առհասարակ սև Աբովի ժառանգները: Բերելով իր չնաղազեղ աւարը Գիւլիստանի բերդի մօտ գտնված Ամնափրկի վանքը, այնտեղ ըրիստոնեայ է մկրտել տալիս և ամուսնանում է նրա հետ:

Այդ առնանդութիւնը առիթ տուեց Աբովի և Գանձակի խանի մէջ մի քանի արեւմտեակ կռիւների, որոնք վերջացան խանի պարտութիւնով: Խանը միշտ անհաշտ մնաց թէ իր դստեր և թէ իր ինքնավոյզ փեսայի հետ: Բայց ձերբութեան հասկում նա հաշտվեցաւ: Եւ որովհետև ինքը մի այլ ժառանգ չունէր բացի միակ աղջկանից, այդ պատճառով իր բոլոր գիւղերը, հարստութիւնը կտակով նրան թողեց: Կնոջ միջոցով Աբովը տէր եղաւ ահագին ժառանգութեան:

Աբով II-ը վախճանվեցաւ 1728 թ. նրա մահից յետոյ, մէլքեների սովորութեան համեմատ, պիտի յաջորդէր որդին՝ Մէլքե-Իսաուրը: Բայց որովհետև Մէլքե-Իսաուրը դեռ անփորձ պատանի էր, այդ պատճառով երկրի կառավարութիւնը յանձնվեցաւ հանգուցեալի եղբայր Թամրազին, և պատանի Իսաուրը մնաց նրա հոգաբարձութեան ներքոյ, մինչև չափահաս դառնալը:

Մէլքե-Թամրազը իր բնակութեան տեղ ընտրեց Հոռեկայ վանքի մօտ գտնված պալատը *) և վարում էր իր իշխանութիւնը ոչ իրեն ժամանակաւոր հոգաբարձու, այլ որպէս երկրի լիակատար տէրը: Նա խիստ դժան մարդ էր և անպոթ: Մտադրված լինելով խաղաւ զրկել պատանի Իսաուրին հօր ժառանգութիւնից, նա սկսեց հետդհետէ ձնել, հարստահարել նրան, մինչև բոլորովին աղքատացնել: Նա մինչև անգամ մտադրում էր իր եղբոր որդու կենցեղ դէմ որդապի լարել, որ իշխանութիւնը միանգամայն իրան մը նայ: Պատանի Իսաուրը սպարում էր Գիւլիստանի բերդում իր մօր հետ, անսակամակի վիճակի մէջ:

(Ըր չարունակվի)

*) Այդ հոյակապ պալատը կիսաւոր դրութեան մէջ մնում է մինչև այսօր, նա մի խօստան վկայ է Գիւլիստանի մէլքեների վաղեմի փառքի և զօրութեան:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

გადასაღარიბიბიზნი

„ვოე კოპი თხაო...“
„ვოე კოპი თხაო...“
„ვოე კოპი თხაო...“

ზრთოთარაიზ ვიქოეზი რაიქინიანი
3—3

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
7—8

რეკლამა

გადასაღარიბიბიზნი

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

გადასაღარიბიბიზნი

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
5—5

გადასაღარიბიბიზნი

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

გადასაღარიბიბიზნი

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
31—50

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

გადასაღარიბიბიზნი

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

გადასაღარიბიბიზნი

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
2—2 (2)

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

გადასაღარიბიბიზნი

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

„გადასაღარიბიბიზნი“
50—180

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

გადასაღარიბიბიზნი

გადასაღარიბიბიზნი

„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“
„გადასაღარიბიბიზნი“

გადასაღარიბიბიზნი

1. გრამატიკა (ანბნის დეკლარაცია)	23,977	02
2. გრამატიკის სახელის მატარებლის რაოდენობა	38,739	17
3. დისკონტო (Disconto) მატარებლის რაოდენობა	2,471,166	25
4. ფინანსური მატარებლის რაოდენობა	1,181,024	66
ა) მატარებლის რაოდენობა	463,765	—
ბ) მატარებლის რაოდენობა	24,800	1,669,589
გ) მატარებლის რაოდენობა	96,909	61
5. მატარებლის რაოდენობა	651,286	59
ა) მატარებლის რაოდენობა	701,338	31
ბ) მატარებლის რაოდენობა	1,352,624	90
7. მატარებლის რაოდენობა	7,659	80
8. მატარებლის რაოდენობა	12,000	—
9. მატარებლის რაოდენობა	16,863	99
10. მატარებლის რაოდენობა	6,228	92
11. მატარებლის რაოდენობა	5,184	03
12. მატარებლის რაოდენობა	65,996	12
რ. ა.	5,766,939	47

გადასაღარიბიბიზნი

1. გრამატიკის რაოდენობა	500,000	—
2. მატარებლის რაოდენობა	51,000	75
3. მატარებლის რაოდენობა	2,013,542	64
ა) მატარებლის რაოდენობა	501,076	56
ბ) მატარებლის რაოდენობა	674,614	45
4. მატარებლის რაოდენობა	266,792	78
5. მატარებლის რაოდენობა	162,323	92
ა) მატარებლის რაოდენობა	1,383,770	26
ბ) მატარებლის რაოდენობა	1,546,094	18
6. მატარებლის რაოდენობა	2,997	20
7. მატარებლის რაოდენობა	82,054	03
8. მატარებლის რაოდენობა	120,932	35
9. მატარებლის რაოდენობა	7,834	53
რ. ა.	5,766,939	47